Մտորումներ ՀՀ ԳԱԱ բարեփոխումների հարցերի շուրջ

Ստեփան ՊԱՊԻԿՅԱՆ

ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտն իր գիտակազմակերպչական գործունեության վերջին տարվա ընթացքում կատարել է մեծ թվով աշխատանքների,որի մասին ներկայացրեց տնօրեն Վլադիմիր Հարությունյանը:

Այժմ ցանկանում եմ ներկայացնել մի շարք առաջարկություններ,որոնց իրականացման պարագայում կլուծվեն բազմաթիվ կնճռոտ հարցեր ակշահենք ազգովի:

1. ՀՀ «Բարձրագույն կրթության և գիտության մասին»օրենքի նախագծում կարծում եմ ճիշտ կլիներ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի գործունեությունը կարգավորող իրավական դաշտը թողնել անփոփոխ:Այսինքն, ներկայիս կարգավիճակը պահպանել կատարելով որոշ փոփոխություններ: Չպետք է մոռանալ ,որ ՀՀ ԳԱԱ ստեղծվել է հայրենա-կան պատերազմի դաժան տարիներին,երբ խորհրդային պետությունը գտնվում էր գրեթե անհուսալի վիճակում:
2. Առաջարկում եմ կազմակերպել և իրականացնել ՀՀ ԳԱԱ անդամների ընտրություններ:Այն հնարավորություն կտա նոր լիցք հաղորդել գիտության զարգացմանը,խրախուսել լավագույն գիտնականներին,հասնել գիտության նոր բարձունքներին:
3. Սկոպուսի հոդվածները չդիտարկել հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ինստիտուտների գործունեության արդյու-նավետության չափորոշիչ,քանի որ նշված բաժանմունքի առաքելությունը հայագիտության զարգացումն է:
4. ՀՀ ԳԱԱ գիտնականների կողմից կատարվել և կատարվում են լավ գիտական աշխատանքներ,որոնց մասին տրվում է ժլատ տեղեկա-տվություն:Անհրաժեշտ է օգտագործել զանգվածային բոլոր միջոցները բնագավառը պարբերաբար տեղական և արտասահմանյան լրատվա-

միջոցներով ներկայացնելու համար: Կվերականգնվի գիտնականի հանդեպ հավատը և կշահենք ազգովի: Օրինակ,ինստիտուտի կողմից կատարված աշխատանքները բազմիցս լուսաբանվել են հայաստանյան և արտասահմանյան հեղինակլավոր լրատվամիջոցներով՝ Հայաստանի Հանրապետություն, Գիտություն , Ազգ, Նոյան Տապան, Ավանգարդ, և այլ պարբերականներում,ինչպես նաև հնչել են ռադիոյով և հեռուստատեսությամբ:

5. Առաջարկում եմ գիտաշխատողների հաստիքացուցակները և աշխատավարձի կամ հավելավճարի չափը սահմանել ըստ կատարած աշխատանքի՝ հրատարակված գրքեր,տպագրված գիտական աշխատանքներ,պաշտպանված ատենախոսություններ և այլն:
6. ՀՀ ""Բարձրագույն կրթության և գիտության մասին""օրենքի նախագծում առաջարկում եմ կատարել հետևյալ փոփոխությունը:

Գիտահետազոտական ինստիտուտների տնօրենների համար կան սահմանափակումներ՝ 65 տարին լրանալուց հետո քաղաքացին տնօրենի պաշտոն զբաղեցնելու իրավունք չունի:Բուհերի ռեկտորների համար այն ընդունված է 70 տարին:Առաջարկում եմ ինստիտուտի տնօրեններին առնչվող տարիքային սահմանափակումը նույնպես դարձնել 70 տարի կամ հանել տարիքային սահմանափակումը:Անհրաժեշտ է հաշվի առնել ղեկավարի կատարած աշխատանքը,ներդրումը գիտության տվյալ ոլոր-տում,կազմակերպչական հատկությունները, հայրենասիրությունը և այլ կարևոր հատկանիշներ:աշխարհի շատ երկրներում նմանատիպ սահմանափակում-ներ գոյություն չունեն:

7. Ինստիտուտը կարող է լուրջ հենարան լինել ՀՀ կառավարության աշխատանքներն արդյունավետ դարձնելու համար:Ինստիտուտի երիտասարդ աշխատողները հրաշքներ են գործում:Պատահական չէ,որ 2018-2020 թթ. կատարած կիրառական առաջարկությունների նշանակալի մասը

հեղինակել են հիմնականում երտասարդները:Նրանք ներգրավված են գիտական բոլոր ուղղություններում:Ավագ գործընկերները իրենց հարուստ փորձն ու գիտելիքները սիրով և պատրաստակամ փոխանցում են երիտասադներին:Այդ է պատճառը,որ երտասարդները դրսևորում են փայլուն արդյունավետություն:

8. Ինստիտուտի աշխատակիցները պատրաստակամ օգնում են միմյանց՝հաղթահարելու առկա բոլոր դժվարություններն ու խութերը:Բացակայում են համընդհանուր տարածում գտած այնպիսի երևույթներ ,ինչպիսիք են՝ չարությունը,նախանձը,չկամությունը, չարախոսությունը և այլն:Տնտեսագիտության ինստիտուտի հաջողությունների հիմնական պատճառը գործին անմոռաց նվիրվածությունն է:
9. Առաջարկում եմ ինստիտուտի կոլեկտիվի 2021թ. կատարած աշխատանքը գնահատել լավ կամ գերազանց:Մեծ ծավալի աշխատանք է կատարվել:Արդյունքները գոհացուցիչ են: Դրա փայլուն վկայությունը կարելի է համարել հրատարակված 15 գրքերը և ավելի քան 100 գիտական հոդվածները հեղինակավոր գիտական պարբերականներում:Այս հարցում հավասարության նշան չի կարելի դնել: